ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
08.02.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/24-4 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան

<< 27 >> 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Լևոն Իսպիրյան Ա/Ձ, ի դեմս Լ. Իսպիրյանի, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 08.02.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/24-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 08.02.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ	Լևոն Իսպիրյան Ա/Ձ
ք. Երևան, Արմենակյան 108/4	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, 6թաղ.
ՀՎՀՀ 01508793	82, 37բն
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	ՀՎՀՀ 40579039
Հ/Հ 1150001612200100	h/h 1570082510170100
Մ. Ադամյան	«Ամերիաբանկ» ՓԲԸ
	milanlux@mail.ru
	095-30-00-90
	Լ. Իսպիրյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.S.	Կ.S.

gitally signed by
PIRYAN LEVON
12880191
te: 2023.06.22
:24:08 AMT